Դանիել Վարուժան

Կամներգ

Կամ կը քըշեմ վաղվան հույսով՝
Արևն առած ճակտիս վըրա:
Հորիզոնը, անհուն լույսով
Իմ աչերուս մեջ կը լողա:
– Դարձի՛ր կամըս, արագ դարձիր, հիո, հիո.
Նվաճե դեզերը հունձքերուս, ժիր ժիր:–

Կը թրոչըտի շուրջը կալին
Իշամեղուն, բռնկած զոհար,
Ու թափ տալով խըռպոտ տաղին՝
Լըծկանն առաջ կը մըղե հաչ:
– Դարձի՛ր կամըս, արագ դարձիր, հիո, հիո.
Քանդե պըսակն որաներուն, ժիր, ժիր:–

Վարոցըս սուր, հըսկա մասուր,
Հոտված՝ սըրտեն անտառներուն
Իմ ծույլ եզիս կողեն հաստույր
Մերթ կը քաղե կաթիլ մ'արյուն:
– Դարձի՛ր կամըս, արագ դարձիր, հիո, հիո.
Խուզե հասկին բոց մորուքը, ժիր, ժիր:–

Հորձանքին մեջ աշխետ հունձքին
Ես կը լողամ երգերուս հետ.

Մըղեղներուն հետ միասին
Կ'ըմպեմ խարին հոտն ափավետ:
– Դարձի՛ր կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Կույս հատիկին պատռե քողը, ժիր, ժիր:–

Ի՜նչ փույթ քաղցած ըլլան եզներ,
Ու մըշակներն ալ՝ ծարավի.
Խոտն է կանանչ ձորին մեջ դեռ,
Թան աղբյուրին մեջ կը պաղի:
– Դարձի՛ր կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Հասկին սըրտեն սուտակ թափե, ժիր, ժիր:–

Ջուր տեղը չէր, կա՛մս աղվոր,
Որ օծեցի քեզ կուպրերով,
Ջինեցի պորտըդ սևավոր
Կայծքարե սուր ակռաներով:
– Դարձի՛ր կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Կըրծե հարդին ոսկիները, ժիր, ժիր:–

Ցորե՜նն ահա, ցորե՜նն ահա,
Մըշուշին մեջ մըղեղներուն,
Անհունորե՜ն կ'արշալույսնա:
…Ջվարթությո՜ւն խըրճիթներուն:
– Կեցի՛ր կամըս, ա՛լ կեցիր դուն,
Խաղաղությո՜ւն խըրճիթներուն…